ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԺՈՒՍՏԻՆԻԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ՝ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ, ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Բուխարեստ

Ռումին ժողովրդի ազգային վերածնության և հայրենաշեն պատմական իրագործումների երեսնամյա տոնակատարության առթիվ խնդրում ենք Ձերդ Սրբությանը՝ ընդունել Մեր անկեղծ շնորհավորանքները և ջերմագին մաղթանքները, որ սոցիալիստական Ռումինիան միշտ աճի ու ծաղկի խաղաղության մեջ երջանիկ, միշտ լիակատար գերիշխան իր լուսավոր ապագայի վրա:

Ողջագուրում ենք Ձեզ եղբայրական բարի զգացմունքներով և սիրով ի Քրիստոս:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

20-ը օգոստոսի 1974 թ.,
Ս. Էջմիածին

*
* *

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբության շնորհավորանքները և բարեմաղթությունները, ֆաշիստական տիրապետությունից Ռումինիայի ազատագրման երեսնամյակի առիթով, Մեզ խորապես հուզեցին: Սրտանց շնորհակալ ենք Ձեր զգացմունքների ջերմության և գնահատանքի համար, որ տածում եք մեր երկրի և մեր ժողովրդի հանդեպ:

Մաղթում ենք Ձեզ երկար կյանք, պտղառատ ու երջանիկ հովվապետություն և ողջագուրում ենք Ձեզ եղբայրական սիրով ի Քրիստոս:

ԺՈՒՍՏԻՆԻԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ

29-ը օգոստոսի 1974 թ.,
Բուխարեստ